ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք. Երևան **«29» մայիսի 2026թ.**

ՈՐՈՇՈՒՄ N 03-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կառուցվածքը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 1-ից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ

Հավելված 1

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

2026 թվականի մայիսի 29-ի N 03-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) ինքնավար պետական մարմին է, որի գործունեությունն ուղղված է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», «Հանրային ծառայության մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով Հանձնաժողովի իրավասությանը վերապահված լիազորությունների իրականացմանը: Հանձնաժողովը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության օրենսդրության, սույն կանոնադրության, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշումների և այլ իրավական ակտերի հիման վրա:

2. Հանձնաժողովը գործում է կոլեգիալության, ֆինանսական ինքնուրույնության, հանրային հաշվետվողականության և թափանցիկության, համագործակցության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա:

3. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անվանումն է՝

   հայերեն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (հապավում՝ ԿԿՀ),

   ռուսերեն՝ Комиссия по предупреждению коррупции Республики Армения (հապավում՝ КПК РА),

անգլերեն՝ Corruption Prevention Commission of the Republic of Armenia (հապավում՝ CPC of the RA):

4. Հանձնաժողովն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր անվանմամբ կլոր կնիք, ձևաթուղթ, դրոշմակնիք և լոգո: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

5. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0009, Կորյունի 15:

6. Հանձնաժողովի ինտերնետային կայքն է՝ https://cpcarmenia.am/:

ԳԼՈՒԽ 2
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Հանձնաժողովի գործունեության նպատակն է իր լիազորությունների շրջանակում կանխարգելել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիան՝ իր բոլոր դրսևորումներով՝ բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգերի ներդրման, հայտարարագրման համակարգի կատարելագործման, կրթական ծրագրերի իրականացման, հակակոռուպցիոն մշակույթի ձևավորման միջոցով:

8. Հանձնաժողովի խնդիրներն են.

1) իր լիազորությունների շրջանակներում ապահովել բարեվարք հանրային ծառայողների դասի ձևավորումը, կանխարգելել բարեվարքության տեսանկյունից խնդրահարույց անձանց պաշտոնավարումը պետական համակարգում,

2) իր լիազորությունների շրջանակներում ապահովել բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրավակարգավորումների միասնական մեկնաբանումը և կիրառումը,

3) բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը՝ այդ թվում վիճակագրության վարման և հրապարակման միջոցով՝ նպատակ ունենալով բարձրացնել հասարակության իրավագիտակցությունը և հանրության շրջանում ձևավորել կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք,

4) ապահովել հայտարարատու պաշտոնատար անձ հանդիսացող հանրային ծառայողների գույքային դրության հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը և կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը,

5) ապահովել հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման կանոնների միասնական կիրառությունը և հանրային հաշվետվողականությունը,

6) ապահովել կուսակցությունների ֆինանսական գործունեության թափանցիկությունը, ապօրինի ֆինանսավորման բացառումը, կուսակցությունների ֆինանսավորման ոլորտում կոռուպցիոն ռիսկերի չեզոքացումը,

7) ապահովել կառավարման թափանցիկության, արդյունավետության և հաշվետվողականության բարձրացումը՝ կոռուպցիոն ռիսկերի գնահատման, գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելու և մասնագիտական խորհրդատվություն տրամադրելու միջոցով,

8) նպաստել կոռուպցիայի դեմ համակարգային պայքարի կազմակերպմանը և կոռուպցիայի դեմ առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային), ոլորտային օրենսդրական ակտերի նախագծերի բարելավմանը,

9) իր իրավասության շրջանակներում ապահովել «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված կարգով ներկայացված հաղորդումների արդյունավետ քննությունը և վիճակագրության վարումը:

ԳԼՈՒԽ 3
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը,

2) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ միասին՝ քննչական մարմիններ) ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա,

3) հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքների մեկնաբանման, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնների պահպանման միասնականությունն ապահովելը,

4) հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը,

5) հայտարարագրման գործընթացը կանոնակարգելը, հայտարարագրերն ստուգելն ու վերլուծելը,

6) օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականությունն ապահովելը,

7) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցելը,

8) իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիտորինգ իրականացնելը և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելը,

9) հանրային իշխանության մարմիններում, առողջապահության, սոցիալական, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտության, կառուցապատման կամ ներդրումային ծրագրերի ապահովման բնագավառներում գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, պետության կողմից հիմնադրված հիմնադրամներում, 50 տոկոս և ավելի պետական կամ համայնքի կամ պետական ու համայնքի բաժնեմասեր (հանրագումարով) ունեցող ընկերություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միասնականությունն ապահովելը, իրավասու մարմիններ առաջարկություններ ներկայացնելը,

10) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման, բացառությամբ օրենքով

նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի,

11) օրենքով սահմանված դեպքերում և կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունների եզրափակիչ մասի,

12) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն իրականացնելը և բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման,

13) Օրենքով նախատեսված կարգով վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև նրանց խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ ներկայացնելը, որոնք ենթակա չեն հրապարակման,

14) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով սահմանված դեպքում նույն օրենքով սահմանված հայտարարագիրը վերլուծելը,

15) «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում և կարգով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ներառյալ՝ կուսակցությունների ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին տարեկան հաշվետվությունների (այսուհետ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվություններ) ներկայացման պահանջների

պահպանման և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգումը,

16) ազդարարման դեպքում իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկման ապահովումը, միջոցների ձեռնարկումը, վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված մյուս գործառույթների իրականացումը:

10. Հանձնաժողովի լիազորություններն են՝

1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի քննում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի քննում գլխավոր դատախազի տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին,

2) իրավասու մարմին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ),

3) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դեպքերում կարգապահական վարույթ է հարուցում դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ, ինչպես նաև դիմում է Ազգային ժողովի խմբակցություններ՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով Սահմանադրական դատարանի դատավորի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու համար Սահմանադրական դատարան դիմելու հարցի քննարկման առաջարկությամբ,

4) վարում է հայտարարատու պաշտոնատար անձանց, այդ թվում՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ կուսակցությունների ղեկավար մարմինների պաշտոնատար անձանց և հայտարարագրերի, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրները,

5) սահմանում է հայտարարագրի ձևանմուշը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները, հայտարարագրերի ռեեստրի տվյալների ցանկը, հայտարարագրերի ռեեստրի վարման, հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու, հայտարարագրի արխիվացման կարգերը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանությունը և ռիսկային չափորոշիչները,

6) հրապարակում է հայտարարագրերը,

7) հրապարակում է նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալները,

8) քննում և լուծում է հայտարարագրմանը և նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների վերաբերյալ գործեր,

9) էթիկայի հանձնաժողովներին, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի տիպային կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն,

10) ներկայացնում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի ներկայացնում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի ներկայացնում գլխավոր դատախազի տեղակալների վարքագծի կանոնների վերաբերյալ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ, ինչպես նաև շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված

քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ, եթե դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին,

11) մեկնաբանում է օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները և այլ սահմանափակումներ, վարքագծի սկզբունքները, ինչպես նաև հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները,

12) վերանայում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունները,

13) վարում է անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, շահերի բախման դեպքերի վիճակագրություն և հրապարակում տվյալներ,

14) իրականացնում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծություն և դրանց վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ իրավասու մարմին,

15) մշակում և հաստատում է սույն կանոնադրության 9-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսված մարմիններում և կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը, որը ներառում է կոռուպցիոն ռիսկերի գնահատման շրջանակը, չափորոշիչները, գործիքակազմը, հրապարակում է գնահատման արդյունքները, մարմինների և կազմակերպությունների առաջարկով՝ նաև վերջիններիս ներկայացրած կարծիքները,

16) սույն կանոնադրության 9-րդ կետի 9-րդ ենթակետով նախատեսված մարմիններից և կազմակերպություններից պահանջում և ստանում է գնահատման գործընթացին առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր, իրականացնում է գնահատում,

17) կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքներով արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ, տրամադրում է մասնագիտական խորհրդատվություն,

18) մշակում է կոռուպցիայի կանխարգելման ծրագրեր և դրանք ներկայացնում է Կառավարություն,

19) իրավասու մարմին կարծիք է ներկայացնում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ,

20) իրավասու մարմին ներկայացնում է իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ,

21) մշակում է կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրեր և իրականացնում միջոցառումներ,

22) առաջարկություններ է ներկայացնում կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ,

23) կրթական ծրագրերի իրականացման համար տրամադրում է ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութեր,

24) կազմում է իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցներ, դրանց վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում իրավասու մարմիններ,

25) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական բնույթի եզրակացություններ,

26) օրենքով սահմանված դեպքերում ու կարգով Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուների, Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների, դատավորների թեկնածուների հավակնորդների, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում բարեվարքության վերաբերյալ իրականացնում է ուսումնասիրություններ և դրանց արդյունքներով ներկայացնում խորհրդատվական եզրակացություններ,

27) օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն և ներկայացնում բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ, որոնք ենթակա չեն հրապարակման,

28) Օրենքով սահմանված կարգով իրականացնում է վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև նրանց խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների, նախարարի տեղակալների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն և ներկայացնում բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ, որոնք ենթակա չեն հրապարակման,

29) ընդունում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները (կանոնագիրքը),

30) ընդունում է հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնագիրքը,

31) մշակում է հանրային ծառայողների վարքագծի ոլորտային կանոնագրքերի նախագծերի մշակման և կիրարկման վերաբերյալ ուղեցույցը,

32) ամփոփում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների, ինչպես նաև շահերի բախման վերաբերյալ դրույթների իրացման

պրակտիկան, ներկայացնում դրա միասնականության ապահովմանն ուղղված առաջարկություններ,

33) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով սահմանված դեպքում մեկամսյա ժամկետում վերլուծության է ենթարկում նույն օրենքին համապատասխան ներկայացված հայտարարագիրը և դրա արդյունքները տրամադրում դիմող մարմնին,

34) ստուգում է կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման պահանջների պահպանումը և դրանցում առկա տեղեկատվության և տվյալների արժանահավատությունն ու ամբողջականությունը,

35) քննում և լուծում է կուսակցությունների ֆինանսական գործունեությանը և կուսակցությունների տարեկան հաշվետվություններին առնչվող խախտումների վերաբերյալ գործերը,

36) իրականացնում է սույն օրենքով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով նախատեսված այլ լիազորություններ,

37) ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկում է միջոցներ, իրականացնում է վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» օրենքով սահմանված այլ լիազորություններ,

38) մշակում է հանրային ծառայողների և հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նվերների ընդունման սահմանափակումների կիրառման ուղեցույցներ,

11. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և այլ կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

12. Հանձնաժողովն իր գործունեության ընդհանուր սկզբունքների, ռազմավարության, մեթոդաբանության, չափանիշների մշակման և կիրառման, համատեղ գործունեության նպատակով կարող է համագործակցել օտարերկրյա մարմինների ու կազմակերպությունների հետ և դրանց հետ կնքել համագործակցության մասին համաձայնագրեր:

ԳԼՈՒԽ 4

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԿԱԶՄԸ, ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Հանձնաժողովի կառուցվածքի մեջ են մտնում՝

1) Հանձնաժողովի նախագահը,

2) Հանձնաժողովի անդամները,

3) Հանձնաժողովի նախագահի և անդամների օգնականները,

4) Գլխավոր քարտուղարը,

5) Հանձնաժողովի հիմնական մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումները,

6) Հանձնաժողովի աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող անձնակազմը,

7) Հանձնաժողովի քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը:

14. Հանձնաժողովը կազմված է հինգ անդամից՝ նախագահ և չորս անդամ: Հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների պաշտոնները ինքնավար պաշտոններ են:

15. Հանձնաժողովի նախագահին անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարը, Հանձնաժողովի նախագահի օգնականները, Հանձնաժողովի

հիմնական մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

16. Հանձնաժողովը՝

1) հաստատում է Հանձնաժողովի կառուցվածքը, կանոնադրությունը, աշխատակարգը, Հանձնաժողովի անդամների միջև բաշխում է համակարգման ոլորտները, հաստատում աշխատանքային ներքին կարգապահական կանոնները,

2) մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը,

3) լսում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները,

4) Հանձնաժողովի գործունեության ընթացքում լիազորությունների և գործառույթների արդյունավետ իրականացման համար սահմանում է այլ իրավական ակտեր:

17. Հանձնաժողովի նախագահը՝

1) համակարգում է Հանձնաժողովի գործունեությունը և կազմակերպում նրա բնականոն աշխատանքը, այդ նպատակով Հանձնաժողովի աշխատողներին իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ,

2) իր իրավասության շրջանակներում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ Հանձնաժողովի անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ Հանձնաժողովի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ դատարաններում Հայաստանի Հանրապետության կամ Հանձնաժողովի անունից հանդես գալու նպատակով,

3) իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի առնվազն երկու անդամի պահանջով հրավիրում և նախագահում է Հանձնաժողովի նիստերը, հաստատում է նիստի օրակարգը, նախանիստի անցկացման կարգը,

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները,

5) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Հանձնաժողովի համապատասխան աշխատողներին, այդ թվում՝ իր օգնականներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

6) ընդունում է հրամաններ, տալիս է կատարման ենթակա պարտադիր ցուցումներ,

7) հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում է քննարկումներ՝ պաշտոնատար և այլ անձանց մասնակցությամբ,

8) հաստատում է Հանձնաժողովում գործավարության կազմակերպման կարգը,

9) նշանակում է Հանձնաժողովի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը,

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները,

11) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի հանձնարարականները,

12) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները՝ սահմանելով դրանց գործառույթները և իրավասությունները,

13) լսում է Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների կատարողականի վերաբերյալ հաշվետվությունները,

14) օրենքով սահմանված կարգով ներկայացնում է իրավասու մարմին Հանձնաժողովի տարեկան բյուջեի նախագիծը,

15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ վերապահված այլ գործառույթներ,

16) Հանձնաժողովի նախագահի արձակուրդի կամ գործուղման դեպքում Հանձնաժողովի անդամներից մեկին նշանակում է իրեն փոխարինող: Փոխարինող չնշանակելու, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր

անաշխատունակության, լիազորությունների դադարման, դադարեցման կամ կասեցման դեպքում Հանձնաժողովի նախագահին փոխարինում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

18. Հանձնաժողովի անդամը՝

1) անկախ է և իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով,

2) համակարգում է Հանձնաժողովի գործունեության առանձին ոլորտներում աշխատանքների կատարման գործընթացը,

3) ներկայացնում է առաջարկություն Հանձնաժողովի նիստերի օրակարգում ընդգրկվող հարցերի վերաբերյալ,

4) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին և քվեարկում անձամբ՝ տվյալ որոշմանը կամ եզրակացությանը կողմ կամ դեմ, Հանձնաժողովի նիստի ժամանակ կարող է հանդես գալ ելույթներով, հարցերով և առաջարկություններով,

5) իր համակարգման լիազորությունների շրջանակներում կառուցվածքային ստորաբաժանումներին տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն, ապահովում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականների իրականացումը,

6) իր լիազորությունների սահմաններում հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում է աշխատանքային քննարկումներ, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ,

7) իր համակարգման լիազորությունների սահմաններում Հանձնաժողովի անունից ստորագրում է պաշտոնական փաստաթղթեր, նշագրում Հանձնաժողովի որոշումներ և այլ փաստաթղթեր,

8) Հանձնաժողովին և Հանձնաժողովի նախագահին ներկայացնում է առաջարկություններ,

9) իրականացնում է սույն կանոնադրությամբ և օրենսդրությամբ վերապահված այլ գործառույթներ:

19. Գլխավոր քարտուղարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման կազմակերպման, մարդկային ռեսուրսների կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման, քաղաքացիաիրավական հարաբերություններին մասնակցության և աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի արդյունավետ գործունեության կազմակերպման համար:

20. Հանձնաժողովը գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ ձեռք է բերում և իրականացնում գլխավոր քարտուղարի միջոցով:

21. Գլխավոր քարտուղարին անմիջական հաշվետու են Հանձնաժողովի աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմը:

22. Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար:

23. Գլխավոր քարտուղարը՝

1) ղեկավարում և կազմակերպում է աշխատակազմի ընթացիկ գործունեությունը,

2) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,

3) առանց լիազորագրի՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր,

4) Օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Հանձնաժողովին ամրացված գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

5) Հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի կառուցվածքը և կանոնադրությունը,

6) Հանձնաժողովին ներկայացնում է աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող անձանց գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով քաղաքացիական ծառայությանը վերաբերող տեղեկատվություն,

7) Հանձնաժողովին ներկայացնում է առաջարկություններ Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերի վերաբերյալ,

8) վերահսկում է Օրենքով Հանձնաժողովին վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող վիճակագրության վարման՝ վիճակագրական տվյալների հավաքագրման, ստուգման և ամփոփման աշխատանքները, ապահովում Հանձնաժողովին հաշվետվությունների ներկայացումը,

9) ապահովում է Հանձնաժողովի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքների կազմակերպումը,

10) համակարգում է Հանձնաժողովի փաստաթղթաշրջանառությունը,

11) համակարգում է Հանձնաժողովում մրցույթների անցկացման, մրցույթի անցկացման ընթացքում ներկայացված բողոքի քննման աշխատանքները,

12) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Հանձնաժողովի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

13) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պատրաստված, ինչպես նաև իր, Հանձնաժողովի

նախագահի և անդամների անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,

14) իր համակարգման լիազորությունների շրջանակում համագործակցում է Հանձնաժողովի նախագահի և անդամների օգնականների, այլ մարմինների և կազմակերպությունների հետ,

15) Հանձնաժողովին է ներկայացնում Հանձնաժողովի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը, տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը ներկայացնելը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված խախտումների վերացման համար, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կառավարչական այլ լիազորություններ,

16) ապահովում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների վարումը,

17) կազմակերպում է Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի անդամների մոտ քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը,

18) իր լիազորությունների շրջանակում ընդունում է անհատական հրամաններ, տալիս հանձնարարականներ:

24. Գլխավոր քարտուղարը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

25. Հանձնաժողովի նախագահի հրամանով Հանձնաժողովի նախագահի օգնականներից մեկին կարող է վերապահվել մամուլի քարտուղարի պարտականությունների կատարումը:

26. Հանձնաժողովի անդամի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն ցուցաբերում Հանձնաժողովի անդամին,

2) համաձայնեցնելով Հանձնաժողովի անդամի հետ՝ կազմակերպում է Հանձնաժողովի անդամի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում Հանձնաժողովի անդամին,

3) կազմակերպում է Հանձնաժողովի անդամի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը,

4) նախապատրաստում և Հանձնաժողովի անդամին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ,

5) կատարում է Հանձնաժողովի անդամի կողմից տրված այլ հանձնարարականներ:

27. Հանձնաժողովի անդամի օգնականը հաշվետու է Հանձնաժողովի անդամին: Հանձնաժողովի անդամը Հանձնաժողովի անդամի օգնականի անմիջական ղեկավարն է:

ԳԼՈՒԽ 5

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

28. Հանձնաժողովի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները նրա ներքին կառուցվածքային միավորներն են: Դրանք են՝

1) հայտարարագրման վարչություն,

2) վարույթների և իրավական ապահովման վարչություն,

3) հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչություն,

4) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն,

5) կոռուպցիոն ռիսկերի գնահատման վարչություն,

6) բարեվարքության ուսումնասիրության վարչություն,

7) կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության վարչություն:

29. Հանձնաժողովի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրենց գործունեությունն իրականացնում են ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագրին համապատասխան, որը հաստատվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

30. Յուրաքանչյուր ստորաբաժանման գործունեությունը ղեկավարում է ստորաբաժանման ղեկավարը՝ վարչության պետը, որը պատասխանատվություն է կրում տվյալ ստորաբաժանման կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Հանձնաժողովն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Հանձնաժողովի գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հանձնաժողովի տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

2) Հանձնաժողովը տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

3) Հանձնաժողովի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով: Գնումների գործընթացը համակարգում է գլխավոր քարտուղարը:

4) Հանձնաժողովը վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում է հաշվապահական հաշվետվություններ:

5) Հանձնաժողովի ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

6) Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը, որը իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» օրենքով սահմանված լիազորությունները:

Հավելված N 2

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

2026 թվականի մայիսի 29-ի N 03-Լ որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1) Հանձնաժողովի նախագահ,
2) Հանձնաժողովի անդամներ,
3) Հանձնաժողովի նախագահի և անդամների օգնականներ,
4) Գլխավոր քարտուղար,
5) Հայտարարագրման վարչություն,
6) Վարույթների և իրավական ապահովման վարչություն,
7) Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչություն,
8) Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչություն,
9) Կոռուպցիոն ռիսկերի գնահատման վարչություն,
10) Բարեվարքության ուսումնասիրության վարչություն,
11) Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության վարչություն,
12) Աջակցող մասնագիտական գործառույթներ իրականացնող անձնակազմ,
13) Քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ: